1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մարտի 23-ի նիստի N 12 արձանագրության 5-րդ կետով հավանության արժանացած «Իրավական համա-ուսուցման, իրավական դաստիարակության և իրավաբանական կրթության համակարգի վերակառուցման հայեցակարգից բխող միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին» արձանագրային որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) 2.1-ին կետի 2-րդ և 3-րդ ենթակետերն ուժը կորցրած ճանաչել.

2) 3-րդ կետի՝

ա. 3.1-ին և 3.2-րդ ենթակետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

3.1.	Կատարելագործել և հստակեցնել իրավաբանի որակավորմանը և իրավաբանական կրթությանը ներկայացվող պահանջները և չափորոշիչները	1) «Իրավագիտություն» որակավորումների ոլորտային շրջանակի բնութագրերի մշակում: 2) Քննարկել հեռահար ձևով ուսուցում չթույլատրվող մասնագիտությունների ցանկում «Իրավագիտություն» մասնագիտությունը ներառելու նպատակահարմարությունը: 3) Վերհանել մասնագիտական գործունեության այն տեսակները, որոնցով զբաղվելու համար պահանջվում է իրավաբանական կրթություն և գործունեության յուրաքանչյուր տեսակի առանձնահատկություններից ելնելով՝ սահմանել նվազագույն կրթական աստիճանը՝ բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս, իրավունքի ոլորտում գիտական աստիճան ունեցող մասնագետ:	2018 թվականի չորրորդ եռամսյակ 2018 թվականի նոյեմբերի երրորդ տասնօրյակ	ՀՀ կրթության և գիտության նախարարություն ՀՀ արդարադատության նախարարություն	1) «Իրավագիտություն» որակավորումների ոլորտային շրջանակի բնութագրերը մշակված են: 2) Իրավաբանական կրթություն պահանջող մասնագիտական գործունեության տեսակները սահմանված են:	օրենքով չարգելված այլ աղբյուրներ
3.2.	Վերանայել (այդ թվում՝ «Իրավագիտություն» մասնագիտության) բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունելության պահանջները	Բակալավրի կրթական ծրագրով դիմորդների գիտելիքների գնահատման պահանջների վերանայում՝ «Հայ ժողովրդի պատմություն» առարկայի հարցաշարում «Հասարակագիտություն» առարկայի իրավագիտություն բաժնից հարցերի ներառում:	2018 թվականի դեկտեմբերի առաջին տասնօրյակ	ՀՀ կրթության և գիտության նախարարություն ՀՀ արդարադատության նախարարություն	Բակալավրի կրթական ծրագրով («Իրավագիտություն» մասնագիտության) ընդունելության պայմանների հստակեցում:	Ֆինանսավորում չի պահանջվում:

»,

բ. 3.4-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

3.4.	Վերանայել գիտելիքների գնահատման համակարգը:	Ավարտական աշխատանքների պատրաստման, պաշտպանության,	2018 թվականի դեկտեմբերի	ՀՀ կրթության և գիտության	Ավարտական աշխատանքների	օրենքով չարգելված

		արդյունքների հրապարակային (բաց) բազավորման ընթացակարգի սահմանում, ինչպես նաև ղեկավարների՝ որպես հսկիչների անձնական պատասխանատվության կառուցակարգի նախատեսում:	երկրորդ տասնօրյակ	նախարարություն Իրավաբանական կրթություն իրականացնող բուհեր (համաձայնությամբ)	պատրաստման, պաշտպանության, արդյունքների հրապարակային (բաց) բազավորման ընթացակարգը սահմանված է, ինչպես նաև ղեկավարների՝ որպես հսկիչների անձնական պատասխանատվության կառուցակարգը նախատեսված է:	այլ աղբյուրներ

»,

գ. 3.5-րդ և 3.6-րդ ենթակետերի «Պատասխանատու մարմինը/ կազմակերպությունը» սյունակից հանել «ՀՀ ոստիկանության կրթահամալիր (համաձայնությամբ)» բառերը,

դ. 3.7-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«	3.7.	Ընդլայնել և արդիականացնել ուսումնական և ուսումնաօժանդակ նյութերը, ավելի թափանցիկ դարձնել դասագրքերի երաշխավորման գործընթացը:	Քննարկել միասնական իրավաբանական էլեկտրոնային գրադարանի ստեղծման և միջազգային էլեկտրոնային ռեսուրսներին բոլոր բուհերի միասնական մուտքի հնարավորությունները:	2018 թվականի չորրորդ եռամսյակ	ՀՀ կրթության և գիտության նախարարություն ՀՀ արդարադատության նախարարություն «Երևանի պետական համալսարան» հիմնադրամ (համաձայնությամբ)	Միասնական իրավաբանական էլեկտրոնային գրադարանի ստեղծման և միջազգային էլեկտրոնային ռեսուրսներին բոլոր բուհերի միասնական մուտքի հնարավորությունների	օրենքով չարգելված այլ աղբյուրներ

				Հայ-Ռուսական (Սլավոնական) Համալսարան (համաձայնությամբ) Հայաստանում Ֆրանսիական համալսարան (համաձայնությամբ) Հայաստանի Ամերիկյան համալսարան (համաձայնությամբ) Գլաձորի համալսարան (համաձայնությամբ)	և նպատակահարմարության հստակեցում:	

»,

ե. 3.8-րդ, 3.9-րդ և 3.12-րդ ենթակետերն ուժը կորցրած ճանաչել,

զ. 3.10-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«	3.10.	Ապահովել ուսանողների, դասախոսների, գիտնականների համագործակցությունը միջազգային գործընկերների հետ:	1) Ապահովել արտասահմանում և երկրի ներսում տարբեր մասնագիտական և մեթոդական վերապատրաստման ծրագրերին դասախոսների մասնակցությունը: 2) Ապահովել հայալեզու իրավաբանական գրականության մշակման, օտարալեզու աղբյուրների թարգմանության ու տպագրության օժանդակումը:	2018 թվականի չորրորդ եռամսյակ	ՀՀ կրթության և գիտության նախարարություն ՀՀ արդարադատության նախարարություն Իրավաբանական կրթություն	1) Դասախոսների մասնակցությունն արտասահմանում և երկրի ներսում մասնագիտական և մեթոդական վերապատրաստման ծրագերին ապահովված է: 2) Հայալեզու իրա-	օրենքով չարգելված այլ աղբյուրներ

				իրականացնող բուհեր (համաձայնությամբ)	վաբանական գրականության մշակման, օտարալեզու աղբյուրների թարգմանության ու տպագրության օժանդակումն ապահովված է:	».

3) 4-րդ կետի 4.1-ին ենթակետի՝

ա. «Կատարման վերջնաժամկետը» սյունակում «2017 թվականի երրորդ եռամսյակ» բառերը փոխարինել «2018 թվականի չորրորդ եռամսյակ» բառերով,

բ. «Պատասխանատու մարմինը/կազմակերպությունը» սյունակից հանել «ՀՀ կրթության և գիտության նախարարություն» բառերը: